

ԻՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԶԵՌՆԱ-ՄԱՏՆԱԼԶԵՏԵՐԸ՝

ԷՔՆԻԿ ՄԱՇԿԱՆԱԽՇԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Հայտնի է, որ ձեռքի ափերի ու մատների մաշկային զմեռն ու նախշերը, որոնք կազմավորված են մաշկային մանր կաթարիկների տարբեր դասավորութիւններին շնորհիվ և որոնց վրա բացվում են մաշկի տակ գտնվող քրտնագեղձերի ծորանները, խիստ անհատական են և մարդու ամբողջ կյանքի ընթացքում մնում են անփոփոխ՝ սկսած սաղմնային զարգացման շրջանից մինչև մահը և նույնիսկ մահից հետո: Այդ փաստը բացառիկ կարևոր նշանակութիւն է ձեռք բերել գործնական կյանքում և հարավորութիւն է ընծոել մաշկային զծանկարների հատկութիւնները լայնորեն օգտագործելու դատական բժշկութիւն և ոմրագործութիւն հայտնաբերման բնագավառներում:

2. Վերջին ժամանակներն էլ ավելի են ընդարձակվել մաշկանախշաբանութիւն /ղերմատոգլիֆիկա/ կիրառման սահմանները և մարդու ձեռնամաշկի այդ հազվագլուտ հատկանիշներին անդրադարձել են նաև բժիշկներն ու մարդաբանները: Ժառանգականութիւն բնագավառի հետազոտութիւնները ցույց են տվել, որ մարդու օրգանիզմի մեջ մի շարք քրոմոսոմային խախտումներ ուղեկցվում են մաշկի ռելիեֆի ժառանգական խախտումներով: Զեռքերի զծանկարների խմբավորումները, որոնք գիտութիւն մեջ արտացոլվում են մի շարք բանաձևերով, հաստատուն կերպով ժառանգվում են: Ապացուցված է, որ մաշկանախշային հատկանիշները ժառանգվում են սերնդե-սերունդ, նույն համախալակութիւնով, առանց զգալի շեղումների: Հենց այդ փաստն էլ պատճառ է դարձել այն բանի, որ մարդկային ցեղերն իրարից խստորեն տարբերվում են քստ մաշկային զծանկարների խմբավորումների: Մաշկանախշային պատկերի չափազանց մեծ տարբերութիւններ են նկատվում աշխարհի տարբեր ժողովուրդների մեջ:

3. Մեր ուսումնասիրութիւններն արդեն ցույց են տվել հայերի պատկանելութիւնը առաջավորասիական կամ արմենոիդ ռասային՝ քստ մաշկանախշաբանութիւն տվալների: Առացված արդյունքների հիմամբ հետաքրքրական է թվում մարդկային այդ հատկանիշների առաջավորասիական բաղադրութիւն տարբերակման ժամանակի որոշումը: Մեր վերլուծութիւն հաջորդ քայլն այն ժամանակի վերականգնման հաշվարկն է, որն անհրաժեշտ է եղել հասնելու տվալ հատկանիշների տարբերակման

այնպիսի մակարդակի, որն այժմ գոյություն ունի հայկական պոպուլյացիայի մեջ:

Կրա համար օգտագործել ենք ուսումնասիրված հայ ազգաբնակչության միգրացիոն մոդելը և ազգանունների կառուցվածքը, որը պարունակում է պատմականորեն կուտակված ժառանգական առատ տեղեկատվություն, և դրանք համեմատել մաշկանախշաբանության հատկանիշների դիտարկված տատանումների հետ:

Վերլուծությունը կատարվում է հետևյալ բաժանի օգնությամբ.

$$F_0 = fe(1 - e^{-t/2Ne}),$$

որտեղ  $t$ -ն - սերունդների փոխարինման տեմպն է /արագությունը/,

$Ne$ -ն - պոպուլյացիայի էֆեկտիվ չափսը,  $T$ -ն - դիֆերենցիալ ժամանակը: Միգրացիոն կառուցվածքի մոդելի դեպքում ստացվել է հետևյալ արդյունքը՝  $t = 329,95$ ,  $T = 8248,75$  տարի: Ազգանունների կառուցվածքի դեպքում՝  $t = 355,19$ , իսկ  $T = 8875,75$  տարի:

Այսպիսով, կարելի է հետևել, որ քստ մաշկանախշաբանական տվյալների, հայերի մայրական նախապոպուլյացիայից ուսումնասիրված ենթապոպուլյացիաների տարբերակման ժամանակը հասնում է մինչև ութ հազարից ավելի տարու, որն իր հերթին թույլ է տալիս ենթադրելու, որ մարդկային այդ հատկանիշների արմենոիդ տիպն արդեն կազմավորված է եղել նեոլիթի և ավելի վաղ դարաշրջաններում, երբ, հավանաբար, Հայկական բարձրավանդակում ստեղծվել ու կազմավորվել է Առաջավորասիական կամ արմենոիդ ռասան և այնուհետև տարածվել դեպի Առաջավոր Ասիայի ու Արևմտյան Ասիայի վայրերը:

4. Չեռնամաշկի գծանկարները գիտնականներին մարդկության անցյալի և ապագա ժամանակների մասին տեղեկություններ քաղելու լայն հնարավորություններ են ցնծեռում: Իսկ այդ տեղեկություններն իրենց հերթին կօգնեն լուսաբանելու մարդու կենսաբանության, ծագման պատմության, ժառանգաբանության և ապագա զարգացման բազմաթիվ մուծ ծալքերը:

Ա.Ա.ՕԴՆԱՍԵՅԱՆ

ՀԱԻ

ՏԻՆՋԵՐԱԿԱՆ ԵՄԻՆ ԱԽՏԱՐՔՈՒՄ

1. Հին հայոց դիցաբանական պատկերացումների մասին գրավոր հավաստի տեղեկություններ է պարունակում Խոտարական հմայագրերի մի խումբ:

2. Այդ խմբում առանձնահատուկ արժեք ունեն տիեզերքի կենտ-